Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6587
6588
6589

891.99
Ц-83

ԿԿ

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ Թիւ 42

8

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ՋԱՅՆԱԳՐՈՒԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

Ա. ԵՒ Բ. ՄԱՍ

ԳԻՆ 10 ՂՐՈՒՇ

Հրատարակիչ
Վ. ԵՒ Պ. ՋԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Կ. ՊՕԼԻՍ
Զամբարեան Թիւ 24.26
1909

ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1834—1881

Ձայնագրուած Հայկական Երգարան Գ. Պրակ

3386

Թեոդորիկ Կարտոն
Գրքի Գ. Հարությունյանց
912 գրք.-ից

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 12

784
Սար

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

Ազգային, Ցեղափոխական, Սիրային եւ զուարճալի երգեր
ամբողջն ալ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕԹԱՆԵՐՈՎ ԵՂԱՆԱԿԱՒՈՐՈՒԱԾ

Օժանդակութեամբ
Բ. ԿԱՆԱՉԵԱՆԻ
եւ այլ հայ արուեստագէտներու

Հրատարակիչ
Վ. ԵՒ Պ. ՉԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Կ. ՊՈԼԻՍ
1909

Տպագր. Ռ. ՍԱԳԱԵԱՆ
Կոստանդնուպոլիս

2923-57

ՀԱՅ ԵՐԳՆ ՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Դարերու կուտակումին ներքեւ ջնջուած ոչնչացուած հին Ազգային երգերու հատակագծերն ու քանի որ կը մնան մատենագիրներու անկիւններն, և բանաստեղծներու խնամոտ խուզարկութիւնով թէեւ կարելի ըլլայ մասամբ երեւան հանել, սակայն ամէն փորձ՝ գտնելու համար հայ հին երգերու երաժշտական արուեստն ու եղանակներն՝ ի զուր պիտի մնան։

Կրօնական երաժշտութիւնն եկած է իր մէջ խտորելու բովանդակ ժողովրդային երգերն, եւ դարեր այսպէս ազգն իր արտասուքներն շրջանները բղխած է ապաւինած լոկ միտքի երաժշտութեան ցնցող ու յուզիչ ազդեցութեանը՝ որոնց հաւանաբար շատ բան աւանդած է նախնի ոչ քրիստոնեայ հայ արուեստն, և այսօր Առաքոս Լուսոյի, Նորաստեղծեալի, Յարեւու եիարի և այլ բնիկ եղանակներուն մէջ մարդ չեմ գիտեր թէ ինչ հոգու այժ մը կը զգայ՝ ազդող, եւ ամբիկա լոկ միտքի զօրութիւնն չէ երգին, ալ ուրիշ արիւնի հոլովութիւնն ունեցող դարեր առաջ ապրող հային, եւ այսօրուան հային, մէջ գտնուող կապն է։

Որչափ ասեն որ միջոց մը չի կար աւանդելու հայ երաժշտական հատակագիծերն, չգոյութեամբ ո և է երաժշտական արուեստի, ներելի համարուէր այդ գանցառութիւնը, բայց քանի որ եւրոպական երաժշտութեան հոսքերն ինչպէս բոլոր ազգերը, հոյնպէս եւ Հայն իւրացուցած է իրեն կատարեալ, այսօր այլ եւս դատապարտելի պիտի ըլլար որ անկարող գտնուէինք մեր յաջորդ սերունդին հաւատարմութեամբ աւանդել մեր ազգին գտնուած 50—60 տարուան երգերն։ Տասնեակ տարիներ եւս, և անոնց պիտի անցնիցեն մեր հին երգերուն կենդանի օրինակներն, այն ատեն զուր տեղը պիտի չմնան երգարանները մէջ գտնուած կարգ մը երգերն իրենց եղանակներովն երգել։

Հայ երաժշտութեան գաղտնիքներն խիստ թեթեւ կը գտնուի այդ խոր գաղտնով։ Գաւառի անկիւնները գտնուած կարգ մը սիրերգներու և այլ երգերու բառերը կարելի ըլլայ հաւաքել, հարց եղանակները։

Զեր ընդունելը երբէք այն առարկութիւնն որ արուեստի մէջ եղողներէ ոմանց կողմէ կը յարուցուի թէ՝ անոնք նախնական և անարուեստ միօրինակութիւններ են և անարժան հօթի առնելու։ Անոնք իրենց պարզութեան մէջ մեր արտին ծտիկ և հայ արուեստն յատկանշող միակ պատուիրներն են, թող ըլլան միօրինակ, թող ըլլան պարզ կամ անարուեստ, սակայն մերն են անոնք, մեր հոգին կը ցոլացնեն, մեր վիշտերը կը պատմեն, մեր ցաւերը կուլան, մեր բողոքներն ի՛արտայայտեն, մեր ուրախութիւններն ի՛երգեն։

Ահա այս պատճառներէն դրդուած՝ այսօր կը ձգնարկենք հատորիկի մը հայ երգերու՝ որոնք հօթադրուած ըլլան եւրոպական խառներով։

Արհամարելով նեղութիւնները, կը ապաւենք սակայն բարեկամաց ձեռնտուութեանց՝ կարենալ կատարել ընելու համար մեր երգարանն, ուստի կոչուած կ'ընենք բոլոր հօթս գրել գիտցող անձանց բարեկամներու՝ գտուած խոր անկիւններէն մինչեւ արտասահման հեռաւոր քաղաքներն, որպէս զի իրենց ձօն կանչեն հայ երգեր գիտցող բարեկամներ, երգել ուն ու իրենք հօթադրեն և կամ եթէ երբէք ունին հին ու նոր հօթադրուած համարներ (ապուած կամ ձեռագիր) հոգին մեզ ուղարկել։

* * *

Եւրոպական հօթադրութիւնը մեր մէջ մուտ գտնելն շատ հին չէ, Պապա Հայրիարձումի առաջին անգամ Լոնդոնի մէջ տարբեր նիշերով, այսինքն հայ խառներով արտայայտել նոյն արուեստն, իսկ բուն Եւրոպական հօթերով երաժշտութեան ուսուցման գիրքը մը առաջին անգամ 1855ին հրատարակուած է բողոքական հայերու կողմէ, որուն մէկ մասն ալ յատկացուած է կրօնական երգերու՝ նոյնպէս հօթանոցով եղանակաւորուած։

Մասնաւոր Սղաւնիի մէջ Խորէն Նարդէյի հրատարակած մէկ քանի երգերէ և 1857ին Սրբոյ Յովհաննէսեանի հրատարակած Փոքր Սրբեւելեանէն յետոյ, ամենէն լաւը և տեւական գործն է վանեմ գաղտնիներով ապաւուած երգք անձնուէր հայերու, Տիրան Զուհամեանի, Գաբրիէլ Երամեանի և Նիկողոս Թաշճեանի, ճշմարիտ

տարբերակ երաժշտական երգեր ալ, 1861ին հրատարակել սկսած կիսամեայ Փոքր Հայկականներն։

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՇԱՃԵԱՆ

Սոյն հանդէսովը ոչ միայն կը Հանան հաւաքել հայ երգերն, այլ հեղինակել, ու նոր մանաւանդ հայկական ու եւրոպական նոթաներու ուսուցումը տարածել թէ՛ թերթին միջոցաւ և թէ երաժշտական ընկերութիւն մը կազմելով բոլոր դակ Պոլսոյ արուարձաններու մէջ երաժշտական դասախօսութիւններ հաստատելով։ Անշուշտ հակայաքայլ պիտի տարածուէր երաժշտութիւնն ալ այս միջոցաւ ամէն կողմ. սակայն Գաբրիէլ Երանեանի ցաւալի մահովը 1862ին կը դանդաղի սկսաւած գործն և վերջապէս կը դադրի մէկուկէս տարուան ընդհատ չրջանով մը 30—40 հատի չափ երգեր հօթագրուելէ յետոյ։

Փոքր հայկականի վերջին թիւը

Նոյն ձեռնարկին կը յաջորդէ Նիկողոս ս Թաշճեանի կրկնակի ձեռնարկները մին 1864ին, միւսն 1877ի միջոցներուն որոնցմէ վերջին անգամի հրատարակուած տետրներու թիւը տասնի կը հասնի։

Նախկին ազատ չրջաններու հայ երաժշտական պատմութիւնը կը փակէ Ե. Մ. Տեսեսան, նոյնպէս կարող երաժշտագէտ մը որ 1880ին կը սկսի հրատարակել «Նուագք հայկականք» անուամբ երաժշտական տետրակներ, կրօնական և ազգ. երգերէ բաղկացեալ, ու 16 տետրի չափ հրատարակելէ յետոյ, իրր առաջին գոհ մամուլի և բանաստեղծ կը վերջացնէ իր կեանքը բանտերու խոր անկիւններն՝ հոն հնչեցնելով իր հոգիին վերջին նուագաւմներն ցոլացնող տխուր երգեր։

1880ին Վենետիկի մէջ միխիթարեաններէն հրատարակուած գրքոյկ մը կը ներկայացնայ խտալական մէթոտով ուսուցանել եւրոպական երաժշտութիւնը

Տնտեսանի նուագք հայկականցի 10ող թիւ

1888ին Ա. Մխեանեան, Կրթուքիւն ձայնական երաժշտութեան և Նոր Քնար տեսնով երկու գիրքերով երգեր և երաժշտութիւն կը տպուեցնէ։ Բարիզի մէջ վերջին միջոցներուն, կարող երաժիշտ մը Կ. Բրօֆֆ. Գալֆայեան իր Կոնցերթերթով և երաժշտական երգերու զեղեցիկ հրատարակութիւններով զարկ մը կուտայ հայ արուեստին։

1908 Յունիս 11ին երբ մամուլն, խօսքն ու երգն հաւատարմագրէր իրենց ճնշուած վանդակներէն դուրս կը թռչին, նոր ձեռնարկներ հեղինակ իրարու կը յաջորդեն պահանջքներու առջև ու կը հրատարակուին Գ. ար Սարգսեան (Սրամ Բժշկեան)(*), Հայ ժողովրդական երգեր (Յ. Սիմոնեան), Քնար հայկական (Ա. Մարկեան) ազգային եւ ժողովրդական երգեր (Ղազարոս Դարբաց Դաս) եւն. եւն., 12—15 հատ չափ հին ու նոր երգերու պարզերական թերթեր, ասկայն հայ երգերու գոյութիւն ունեցող 5—6 հարիւրէ աւելի եղանակներու քով այնքան փոքր կը մնայ ասոնց թիւն որ երբէք չէր կարող գոհացուցիչ պատասխանել ընդհանուր պահանջումին,

Ահա այս պարագաներու ներքեւ կը ձեռնարկենք այս գործին որուն անհրաժեշտ պիտի ըլլանք... գործին աւարտումէն յետոյ ասկայն։

Վ. եւ Պ. ՉԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ

(*) Հեղինակած է նաև Գարեգին Գալլայլիկեր անուանով մանկական երգեր։

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ
ՀԱՅԿԱԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԳ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24



Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ՚ալ տանք,
Ո՛ր ազգն երբ զԱնի փրկարար գոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարգեւեց։

Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ ըղխած։

Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան,
Թերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնը եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց։
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամէն վայրկեան դոչել պարտ է մեզ.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական.
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինել գործոց ազգային։
Այն որ յԱստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ'այսպիսի.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ.
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայերս անարդուած՝ փրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շընորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած։
Որուն շնորհիւն յարդ ստացանք մենք.
Անոր յարդ տալով ապրինք ու երգենք.
Կեցցէ՛, կեցցէ՛ կեցցէ՛ միշտ.
Ազգն ու Սահմանադրութիւն։

Դուն ալ Հայաստան, սիրուն հայրենիք,
Ա՛լ այսուհետեւ մի սրգար լռիկ.
Զի ա՛լ քու որդիքդ նոր ոգւով բերկրեալ,
Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ։

Ալ մի՛ լար մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայե՛ր, միտանք մեր մօտն հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին տուրբ օրէնք։
Սահմանադրութեան բարեաց վոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մը փոքրանակ։

Թո՛ղ և մեր որդիք հետ ունեցց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Յ. Գ. ՍԸՎԱՃԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՅԼԵՐԳ



Դաշնակցական խումբ գիտանք մենք Սասուն,
Մեր քաջ ընկերներ մեզի կը սպասեն.
Անդրանիկը քաջ իւր զինուորներով,
Կ'սպասէ գարնան, կ'ուզէ պատերազմ։

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,

Հայերը անվախ հոգւով միացած
Հրացան ուսերին ոտքի են կանգնած։

Ամբոխները հոգւով են երդուած,
Ցէդայի ուժով գնում եմ առաջ.
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կ'ուզէ պատերազմ։

Հերիք եղբայրներ մենք շատ քնեցինք,
Բաւական չէ՞ մեզ այսքան համբերինք.
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմայ ուժ ունինք դարձեալ ետ կ'առնենք։

ԱՌՀԱՍԱՐ



Հեռաւոր երկիր նստած դու նայդեմ
Հայրենեաց բաղդին մտատանջ ես տեղեակ,
Քարոզ քաշարի նոր սկզբանց վեհ
Յեղափոխութեան ձայնատու հնչակ։

Նոր գաղափարի քո յանած սերմեն,
Ազնիւ պտուղներն հասունցան արդ,
Կարին և Գոլխ արտասուն նեմեն,
Անդրանիկ շարժումդ ծնան քեզ, հնչակ։

Զար բռնակալը, Հայոց կեղեքիչ,
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ,
Խուլ Եւրոպայի թնդաց մէջն դահլիճ,
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ։

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա,
Հասած կարմրին արեան նմանակ,
Կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչակ։

Կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցո՛ւր արագ
Թո՛ղ Հայք ոտք ելնեն ծագէ մինչև ծագ,
Փրկչի ծանր չղթայն, ծագէ նոր արեդ
«Ազա՛տ ենք» հնչէ, ոսկեզօ՛ծ Հնչակ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ (Պերճ Մուշլու)

Ի ԴԻՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԱՄԷՆ. ՀԱՅՐԻԿԻՆ



Մի՞վ է որ գայ մեզ՝ ճեղքած օդն ու ալին,
Ճակատն գոհարք՝ ասուեղք կը փայլին.
Թագաւոր մ'է Հայ, որ ցասկեց չիրմէն,

Ո՛չ, դէմքը վառոդք արցունք ըսպի են.
Նա կ՚արհամարհէ ծիրանի՝ փառքեր,
Նա սև է հագեր։

Նա մեր հայ եղբարց արցունքն է քաւեր,
Ցոյց կուտայ մեզի արիւն ու աւեր,
Դիւցա՛զն մ՚է, որ դուրս թքեաւ դամբանէն,
Ո՛չ, թուր չ՚է՛ ձեռքն՝ այլ խաչ բռներ արդէն,
Զը ցայտեր աչքէն շանթեր, այլ ա՛խ՝ զո՛ւթ.
Դողայ անկէ Քուրդ։

Նա կուգայ Հայոց մարդերէն կարմիր,
Ազատեց Քրդէն Հայը վշտակիր,
Խաչախայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց ի Հայս ազատութեան փող,
Տեսէ՛ք, քուրձ հագեր, կաշեան իւք դրակ,
Ցոյց սիրան է կրակ։

Գայ Մատեայ արէն՝ նա ձախն ու աջը,
Մովսէսի քրնարն, Դաւթի խաչը,
Ատրի մը նայուածք, քրնարի մը ձայն,
Ազգայ խորերէն կը սիրէ նա Հայն՝
Գեռ չը ճանչցա՞ք զայն, ճակա՛տք վշտակոծ,
Հրեշտակն է Հայոց։

Ահա կը հնչէ նորա հեշտ արբենք,
Արձագանք կուտան Հայոց դաշտք՝ լերինք,
Երթանք իր շուրջը, Հայեր արտասած,
Զը խաբեր՝ մատներ նա մեզ օտարաց.
Զը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ,
Հայտն է Հայրիկ։

Գլխիկը դրած ազգաւոր աքլեմ,
Զը թափեր ճակտէն գեռ ալիք վրանեմ,

Բայց դէմքին վրայ կանուխ են վիթխած
Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց,
Մխակ վարձք մ'ունի այն է կոչել զինք՝

«Խրիմեան Հայրիկ։»

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԽԱՆԱՍՈՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ



Կռուեցէ՛ք, տղերք, կռուեցէ՛ք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուդն առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռա՛ւ մեզանից ոսոխին ահը.

Յառաջ խիզախենք իրքեւ նահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մէկ գնդակ։

Ահա՛, քրդերը փախչին ապտակած,
Ահա՛, դիակներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէք անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին առաւ է գնդակ։

Այս անգամին ալ ցոյց տանք թշնամուդն
Թէ ի՞նչ է Հայու ոյժն ու քաջութիւն։

Մեզ ոտնատակին մեր նախնի քաջեր,
Մեզի կրապանն մեր հէգ եղբայրներ.
Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրան ու հոգին պահենք անարատ.

Դէ՛հ կռուինք ոլորք մինչև չունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պատկին։

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հայաստան.
Այսպէս յորդորեց և ինքաւ արին,
Թողալ մեզ անուն յիշատակ բարին,

Անեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալին կարիճ Մարտիրոս։

Մ. Ե.

ՍԽՐԵՐԳ



Ահա եկաւ լուսին արծաթի
Մութ ամպերու տուներէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն.
Անուշ հովիկ փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բերը բիւր ծիր ալիք։

Նաւակին մէջ իմ գեղուհին,
Փառած անթոյթ լուսնի տակ,

Կը ձայնակցի իր կիթառին
Հնչուն ձայնով մը յատակ.
Անուշ հովիկ փչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ։

Ձայնով կ'երգէ սէր ու գրգռանք,
Համակ յուզում ու սարսուռ,
Ա՛լ թո՛ղ աղջիկ երգդ ու նուագդ,
Բոց աչերդդ ինձ դարձուր.
Անուշ հովիկ փչէ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ։

ՇԱՆԹ

ՎԵՐՋԱԲԱՆ


Moderato
Հը - ռեց . ամ - պն - ը ը - կան ծուծ - կե - գին Ը - կինքն . ու լու - սին աշ - քե
խը - լե - գին մը - նա - գի մ . նակ հո - գիս վը - դո - ված , Ձեռ - նե - ը - ս ծո - գիս ,
գը - լուխս քաշ - ա - ած
A tempo
Եւ այ - նուհ - տև ա - մեն ի - ր - կուն մը - նում եմ լուս - դի
Ինչ - ու - ա - ա - ա - ա - ա դեմ ք - ն - ա - գ - ա - գ - ա - գ

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն։
Նորա արիւրամած դէմքը նայելիս՝
Ցիշում եմ թշուառ վիճակը ազգիս։
Ախ, ցոլա՛, փայլէ՛, սիրաբէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային։
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ ի՞նչպէս կրաւ Հայ ազգի դատը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Հայրենի հողը, —Աշխարհն Հայաստան։

ԳԱՄԱՌ—ԳԱԹԻՊԱ

ՑԱԼԻՔՈՐԻՆ



Տալարիի զաւակ եմ ղորդ,
Քաղքացու պէս չեմ թուլամորթ,
Սարի զաւակ, քարի որդի
Հին քաջ հայոց եմ ժառանգորդ։

Տալուրիկի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր վատին առաջ,
Քարուտ լերանց եմ ազատ լաճ,
Չեմ տեսել ո՛չ արօր, ոչ մաճ։

Հա՛յ աղբերատիք, վա՛յ աղբերատիք—
Տալուրիկի զաւակ եմ քաջ.
Ազատութեան սիրոյն համար,
Եկէ՛ք դէպ ինձ, յառա՛ջ յառա՛ջ։

Երբ իմ աչքերս բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար,
Մինչ չփակեմ աչքս ի խաւար
Պիտ՝ չի կոխէ հոս ոտք օտար.

Իմ մամ ծնաւ զիս սարերու ծոց,
Ընկոյզի կոճղ մ՚ինձ օրօրոց,
Տրկլոզ ծընայ, մեծցայ տրկլոզ։
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց.

Հա՛յ աղբերատիք, վա՛յ աղբերատիք, եւն.։

Ոտքս բոպիկ, կուրծքս միշտ բաց,
Ինչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ինձ մօտ մէկ է արեւ, փուք, ցուրտ,
Բա՛ւ է չիշխէ, Պարսիկ կամ Քուրդ։

Իմ կեանքս խիստ է եւ չարքաշ,
Փոխուկ կեանքի բնաւ չեմ վարժ,
Բնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ սրրիկ ու երկրաշարժ.

Հա՛յ աղբերատիք, վա՛յ աղբերատիք, եւն.։

Հարբատութիւն, ուտում, հանճար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար,

Բա՛ւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բաւ չի խրոխտար վրրաս օտար.

Սիրած ղէնքերս չեմ ձգեր ձեռքէս,
Առիւծն անվախ չէ ինձի պէս,
Կը սիրեմ որս, կռիւ, աւար,
Կը ապառնեմ երբ ընկնի հաւա՛ր.
Հա՛յ աղբերութիք, վա՛յ աղբերութիք եւն։

Թո՛ղ այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վատ անդութին հետ լինին հաշտ,
Ես պիտ՝ մընամ միշտ անուանճ
Թէև վրաս գայ քրտան վաշտ։

Ցորենի տեղ կ՝ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ.
Շինեմ փեռատ, խոփ, խաչերկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։
Հա՛յ աղբերութիք, վա՛յ աղբերութիք եւն։

Այծեամի պէս կը ցատկռտեմ,
Առիւծի պէս կը մռնչեմ,
Ծովի նման կը փրփրիմ,
Կայծակի պէս կը հարուածեմ.

Կուգայ դաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը,
Կամ ուրախ ապ գիշերոյն,
Կամ պաղ տեսնէ քու երեսը։
Հա՛յ աղբերութիք, վա՛յ աղբերութիք, եւն։

Հաւար ընկնի երթամ յառաջ,
Սատոյ լերինք հանեն հա՛ռաչ,
Հառաչ հանեն եւ ներկուին
Իւր կարճի արիւնով քաջ։

Կարճին սիրտ՝ կարիճին ձեռք,
Ինչ փոյթ քաջին հազար մէկ վէրք
Մէկ հարուածին կուտաս հարիւր
Սպառուին լէշ կանեաս հազէր։

Հա՛յ աղբերք, վա՛յ աղբերք, ևն։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ (Գերճ Մուշլու)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՄԻՐԱՑ Լ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

1830 — 1866

Հայ յեղափոխութեան և նոր գրականութեան առաջնորդող այս երեւելի դէմքը, յաւէտ կենդանի պէտք է մնայ ամէն հայու սրտին մէջ, որովհետեւ ան՝ ժամանակակից հայ պատմութեան մէջ առաջին

անդամ փորձեց վիշրել Հայուն գերութեան շղթայներն ոչ միայն իր գրիչով, երգերովն ու ճառերով, այլ իր կեանքն իսկ փշացնելով բռնապետութեան շղթայներուն ներքեւ, ասկայն «անդարձ ազատութիւն» գոչելով։

Միքայէլ Յ. Նալբանդեանց ծնած է 1830 հոկտեմբեր 27ին Նոր-Նախիջեւանի մէջ ու մինչև 1846 իր նախնական ուսումը ստացած է Տէր Գաբրիէլ Պատրիարքանցէ, յետոյ գրագիր եւ քարտուղար եղած է տեղւոյն եւ Բեսարաբիոյ առաջնորդ Մատթէոս արք. Վեհապետեանի քով։ 1853ին Մոսկուա եւ անկից Փեթրոպուրկ երթալով տեղւոյն համալսարանէն կը ստանայ վարժապետական աստիճան, ուրկէ վերադառնալով Մոսկուա հոն կը սառնձնէ Լազարեան ճեմարանի հայ լեզուի դասախօսութիւնն, կը հետեւի նաև Մոսկուայի համալսարանի բժշկական ճիւղին ասկայն կիսատող կը թողու։ 1857ին Մոսկուայի մէջ կը թարգմանէ Էօժէն Սիւի Թափառական Հրեայի Ս. հատորն, որուն ընդարձակ յառաջաբանին մէջ կը պարզէ իր տեսութիւններն կղերականութեան զեղծումներուն մասին։ 1858ին երբ Ս. Ե. Նազարեանց կը սկսի հրատարակել Հիւսիսափայլ ամսագիրը, Նալբանդեանց անոր գլխաւոր աշխատակիցն է՝ ելլայ ուր՝ Կոմս Իմմանուէլ և Փառոս Յովակեան առաջնորդ թեամբ 1858—59 տարեշրջանին բացի բանաստեղծութիւններէ 30ի հատի չափ կարեւոր յօդուածներ ունի։

Նալբանդեանցի ազատ հոգին ինքզինքն շատ սեղմուած կը զգայ Մոսկուայի կամ Ռուսիայի նուազ քաղաքակիրթ շրջանակներուն մէջ, ուստի դէպի Եւրոպա քանիցս ճամբորդութիւններ կը կատարէ՝ աւելի հիմնաւոր կերպով կազապարելով հոն իր ընկերվարական, գրական և ազգային յատկանիշներն։ Այսպէս 1856ին եւ 1858ին կ'այցելէ Կ. Պոլիս, Վիէննա, Վենետիկ, Բարիզ, Լոնտոն։ 1860ին Փեթրոպուրկի համալսարանին մէջ կը ստանայ արեւելեան լեզուագիտութեան կանոնաւոր աստիճան։ 1862ին Բարիզի մէջ կը տպագրէ Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ, իր ընկերվարական գաղափարներուն գլուխ գործոցը Սիմէոն Մանիկեան կեղծանունով և Երկու տող անունով փոքրիկ տետրակ մը։ 1861ին եւ 62ին կը ճամբորդէ Թիֆլիս, Երեւան, Էջմիածին ուրկէ Թիֆլիս վերադառնալով կ'անցնի Կ. Պոլիս, Բարիզ, Լոնտոն եւ

անկէ Բարիզի և Սուէզի ճամբով Կալկաթա կ'երթայ՝ մեծահարուստ հայերու 70 տարի առաջ թողած եւ Նոր Նախիջեւանի հատորը կատկուած անապին գումարներն ձեռք բերելու նպատակաւ։

1862ի վերջերն իր Ռուսիա վերադարձը ցաւատիթ կ'ըլլայ որոշեուեւ տէրութեան մեծամեծ կասկածներ ներշնչած էր իր ուղեւորութիւններով և գաղտիարներով ուստի անմիջապէս ձերբակալուելով կը դրկուի Պետրոպաւլովսքի բերդը որ վտանգաւոր քաղաքական յանցաւորներու յատկացուած էր, հոն մութ ու խոնաւ բանտերու մէջ իր ազատ հոգին կը ճմլուի ու ուրիշ ճամբայ չգտնելով ազատութեան ու գործունէութեան, յուսահատ կը փչանայ. 1866ին մարտ 31ին 3 տարուան բանտարկութիւնէ յետոյ, և մարմինը ապրիլ 14ին կը թաղուի Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքին ձախ դրան առջեւ։

ԻՐ ԵՐԳԵՐԸ

1. Երազ (սարսափելի Երազ տեսայ) 2. Իտալացի աղջկայ երգ, 3. Մամիկոնեան մեծ Վահանի պատասխանը, 4. Ցիտեն: 5. Գարնանամուտ, 6. Առօրեայ աղխարհ, 7. Վայ բեկող ասդեր. 8. Աղքատ կին, 9. Հայ մարդու Հայրենիքը, 10. Երազ (ոն լոկ երազ էր, մի խռովէ ինձ), 11. Լուսին (ոն, լուսին, լուսին). 12. Ազատութիւն, 13. Մանկութեան օրեր:

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ



«Մեր հայրենիք, թշուառ, անտէր,
Մեր թըշնամուց ոտնակոխ,

Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։»

«Մեր հայրենիք չղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։»

«Ահա՛, եղբայր, քեզ մի դէրոշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Աղտատուքով լուացի։»

«Նայի՛ր նորան, երեք գունով՝
Նուիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թրշնամու դէմ,
Թո՛ղ կործանուի սէգ հրեշան։»

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն։»

«Ահա՛ իմ գործ, ահա՛ իմ դէրոշ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գընա՛ փրրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։»

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտի՝ մեռնէ,
Բայց երանի՛, որ իւր աղգի
Ազատութեան կը զոհուի։»

«Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Աղգի սէրը քաջալեր,

Գընա՛ թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր։»

«Գընա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չը տեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին։»

Ասաց, տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ։

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քրոջ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր։

«Քուրիկ,—կանչեց քաջ պատանին,—
Մընաս բարեւաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան։

«Նա սուրբ է ինձ, երբ մրկրտուած
Արտասուքով ու կրնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած։

«Թէ մեռանիմ, դու մի՛ սրդար,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի։»

Ասաց, վազեց դէպ ի հանդէս
Աւարիացոց յանդիման,

Իւր արիւնով գրնել յաւէրժ,
Ազատութիւն Իտալեան։

Ահ, իմ սիրտը կըտրատվում է
Տեսանելով այսպէս սէր,
Դէպ ի թըշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Սորա կէսը, կէսի կէսը,
Դէթ երեւէր մեր աղգում.
Բայց մեր կանայք... ո՛ւր, Եղիշէ,
Ո՛ւր մեր «Տիկնայք փարիկաուն։»

Ահ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ՛... թըշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

1861 Թարգմ. յիտալ. Կոմս Էմմանուէլ

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ



Ի զէն հայեր, ի սուր և ի հրացան,
Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
«Թո՛ւէք հայեր, թո՛ւէք դէպի Հայաստան»... (Կրկնել)։

Արեւելք, արեւմուտք, հարաւ և հիւսիս,
Ի՞ղբդաց ու թնդաց քաղցր աւետիս։
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից։

Խումբ-խումբ հայեր դէպի Տաճկա-Հայաստան,
—Փրկութեան աւետիք առած ի բերան—
Դիմում են ցնծութեամբ իբրեւ հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք։

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբար վրէժ, վրէժ է կանչում,
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը.
Արիւն է լոկ հոսում բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում
Անթիւ աւար և զանձ հայերին թողնում.
«Յաղթութիւն, Յաղթութիւն», գոչեցին միաձայն,
«Թշնամին կորած է, կեցցէ՛ Հայաստան»...

ՉԱՅՆ ՏՈՒՐ



Զա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չկամի՞ս դժբաղդիս,
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքք վէտ վէտ.
Խառնեցէք զարտասուս այս Ջրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վրայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ, ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այդպէս պիտ՝ մնայ Հայաստան,
Փըշալից անպատ երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի։
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժան է Հայն և Հայի որդին։

Արդօք գալո՞ւ է մի օր ժամանակ.
Մահի գլխուն տեսնել մի դրօշակ,
Եւ ամեն կողմից պանդուխտ ազգայինք,
Դիմեն դէպի իւրեանց քաղցրը Հայրենիք։

ՌՍՖՖԻ

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ



Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ր, ինձ ասա՛,
Թռչում ես այսպէս արագ։

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ,
Ծրնած տեղը Աշտարակ,
Անդ չինի՛ր քո բոյնը,
Հայրենի կըտուրի տակ։

Անդ հեռո՛ւ ալեւոր
Հայը մ՚ունիմ արգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարև տրա՛,
Ասա՛ թող նրան էլ,
Իւր անբաղդ որդու վերայ։

Դու պատմէ՝ թէ ինչպէս,
Ասա անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել է կէս։

Ինձ համար ցերեկը՝
Մութ է չերջում արեգը,
Գիշերը ծաց աչքիս՝
Քունը մօտ չէ գալիս։

Ասի՛ր, որ չի բացուած՝
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկուած։

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր թռի՛ր արագ,
Դէպ՝ Հայոց երկիրը,
Ծընած տեղս — Աշտարակ։

Գ. Ա. ԴՈՂՈԽԵԱՆՑ

ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱՒ ԱՆՔԻՆ ԱՌԹԻՒ



Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ֆէտայիներ դաշնակցական, վրէժխնդիր գոռում են.
Սոսկաց քիւրտը, լեղապատառ Մաղրիկցին,
Զէր ապատում իսպառ ջնջուիլ ֆէտայիի գնդակից։

—Եա մա՛ն, Աստուած, ֆէտային եկաւ ո՞ւր փախչենք,
Ասաց որդուն կրծքին սեղմաց լեղապատառ քրդուհին.
—Մի վախենար, հանդիստ եղիր բաջի՛ Ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրիժառու քաջ ֆէտան։

Մի ժամուայ մէջ Մաղրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտեր կարմիր գոյնով
ներկուեցաւ.
Փչի՛ր զեփիւռ, դէպ Սասուլ մեռնք թռչին,
Դիրքեր բռնեն, գաթայ հալուայ ձիւնի չրոյ ճա-
շակեն։
Մերթ կռուումէ, մերթ բաձրանում քաջ ֆէտան,
Եզակի է պատմութեան մէջ արշաւանքի տեսարան։

Զկար Կարօն, տխուր պատեց ամենքին.
Երանի՛ է նրա հոգուն, որ զոհ դարձաւ այդ կռուին,
Փեղ ենք յանձնում ով պաշտելի Սասուլ,
Կրծքիդ մէջը, ամուր պահի անմահ զոհերն Հայերուն։

Հայե՛ր, յիշէք նուիրական այս օրը,
Ցուլիս ամսի քսան հինգին կատարեցէք մեր ծոնը։

ՍԱՍՆՈՅ ԿՈՏՈՐԱԾ



Սասուն եկաւ ապստամբեց
Աշխարհի մէջ հանեց թունդ,
Ամերիկա, Եւրոպ ցնցեց,
Քաջաց բանակն գունդագունդ։

Հայոց արտեր թրթռացին
Հայու ձայնը որոտաց,
Կլորիճ.ք յառաջ շուտ խաղացին
Ազատութիւնը թնդաց։

Ա՛խ, Սասունցի.ք, քաջ Սասունցի.ք
Ձեր արիւնին մեն.ք զուրպան,
Հնչակեան տուրբ սերմեր ծըլին,
Ազատութեան մեն.ք զուրպան։

Գուրտը տեսաւ և կատաղեց,
Զօրքեր հանեց բիւրաւոր,
Ցիսուն հազար զօրքեր կանչեց,
Սրիւնարքու զօրաւոր։

Եւ Սասունը պաշարեցին,
Այն վայրենի քիւրտերը,
Թնդանօթներ որոտացին՝
Քարքանդ ըրին գիւղերը։

Ա՜խ, Սասունցի՛ք, քաջ Սասունցի՛ք,
Ձեր արիւնին մեն՛ք զուրպան,
Ա՜խ սուրբ հողիդ անմահ որդի՛ք՝
Դիմակներուդ մեն՛ք զուրպան։

Մօր արդանդը վասը պատուց,
Գլուխներ անցուց նիզակով
Մինչ վերջին շունչ Սասուն կռուեց,
Ազատութեան կարօտով։

Եւ արիւնը գետի նման
Թրջեց Սասնոյ վեհ սարեր,
Հայ՛ք բիւրաւոր կոտորուեցան,
Գարշ բռնութեան սուրբ զոհեր։

Ա՜խ, քիւրտ ու վատ բռնաւորներ
Նզովք ըլայ ձեր գլխուն,
Միշտ կորիճ են Սասունցիներ,
Նզովուի, Զէ՛քի՛, քո անուն։

Եւրոպ տեսաւ ցնցեց անդէն,
Ապշած նայեց Հայերուն,
Տեսաւ վիճակ գէշ է Թուրքին,
Խորհեցաւ իր շահերուն։

Հայու արեան չը հաւատաց
Եւ յանձնախումբ մը ծնաւ,
Թուրքն ալ առաջ ինկաւ խնդաց
Զիւնոտ լեռներ ցոյց տուաւ։

Ա՜խ, Եւրոպա, մօր մը պէս խորթ
Հայ դիմակնե՞ր կը ծաղրես,
Թուրքին կ՚ընտրես քեզ առաջնորդ
Այս ի՞նչ կատակ մեզ կ՚ընես։

Կեցցէ՛ կռիւ, կեցցէ՛ արիւն,
Այս է ճամբան միշտ մեզի,
Մեր արիւնը Եւրոպային
Անշուշտ թէ քիչ կը թուի։

Ազատութեան համար անմահ
Թող եղէ՝ ողջ Հայաստան,
Մեր արիւնով է մեզ ներկած,
Շահախնդիր Եւրոպան։

Սատունցի կին, Սատունցի քաջ,
Ձեր արիւնին մենք դուրպան,
Հնչակեան տուրբ սերմեր ծլին,
Ազատութեան մենք դուրպան։

ԱՅՐԻԻՆ ՈՂԲ



Արշալոյսը նորէն բացուաւ,
Ամպու զամպէն ձեն կուգայ,
Ալ ձին եկաւ անտէր եկաւ,
Ա՛խ իմ եարը տուն չեկաւ։

Լոյսը բացում դուռը բացում,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ,
Սիրուն կրծքին վերք ստացած,
Արիւն թաթախ ներս ինկաւ։

Ամ սիրուն ձի դու ինձ ասա,
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ո՞ր ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Անտէր թողիր իմ եարը։

Ամպեր եկաւ մութը պատեց,
Մինակ նստած կուլամ ես,
Սիրելիս, կորած եարիս,
Սուգ ու չիվան կ'անեմ ես։

ՍԻՐԱՀԱՐԻՆ ՆԱՒԱԿԸ



Լրծի մէջ նաւակը
Մեղմ հոլմիկ կը տանի,
Նորա մէջ նստած է
Սիրահար պատանի։

Պատանին ձեռքն ունի
Կիթարա ու կ'երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եղերքէ։

Լըճակին մէջը կայ
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան՝
Հանապազ փակ ու դրոց։

Պատանւոյ հուտակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին
Սըրտատրոփ կը սպասէր։

Մեղմ հովը ուելի,
Աւելի սառակացու,
Երկինքը թուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ։

Ալիքի լեռները
Գոռալով կըծըփան,
Պատանին ներկուղ
Կը նուազէ կիթարան։

Լուսինը ամպերի
Տակերէն երևցաւ,
Սակայն աղէտի
Պատկերը բացուեցաւ։

Կէս ճամբան ալիքը
Նաւակին խըփուեցան,
Նաւակը փըշրեցին,
Ցոյս չի կայ փրկութեան։

Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,
Կիթարի լարերը
Նա ուժգին հընչեցուց։

«Տա՛ր վերջին խօսքերը
Անձկալուս, ո՛վ լուսին,
Թէ՝ քաղցրիկ անուշդ
Յիշելով կը մեռնիմ։»

Դաղրեցաւ փոթորիկ,
Ու ալիք պատկեցան,
Ջրի վրայ կրտրատնք
Նաւակի երեւցան։

Սիրուհին արտասրուի՝
Նայեցաւ լճակին,
Հասկացաւ դառնութիւն՝
Իւր անպաղդ վիճակին։

«Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ և այս կեանք,
Գէ՛թ մահով այսուհետ
Ջրի տակ միանանք։»

Ասաց, և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գլորվեց, զոհ եղաւ
Անկուշտում ծովակին։

ՓԱՄԱՌ-ՓԱԹԻՊԱՑ

ԵՐԳ

ԵՍԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Աղատութեան սիրոյն համար շատ արիւններ թափուեցան
Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այստեղ թաղուեցան։ (կրկնէ)

Ահա եղբարք ես ալ կ'երթամ ազգիս համար մեռնելու,
Աղատութեան սիրոյն համար ամբողջ կեանքիս զոհելու։

Գերեզմանիս հողին վրայ թափէ արցունք հայր և մայր,
Սիրէ ծաղիկ բուրմնալէս նահատակ եմ ես յաւէտ։

Ահա այսօր Հայ եղբայրներ կուգան այստեղ ողբալու
Նահատակաց հողին վրայ աղի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ դուք ալ եկէք գերեզմանին խորերէն,
Ուրախացէք և ցնծացէք Աղատութեան դոչերէն։

ՄԱՂԹԱՆՔ

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան, Եւ արժանի անոնց հոգին Երկնից Սուրբ Արքայութեան։

ԳՐԻԳՈՐ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

1908 *Օգոստոս* 8

ԽԱՆԻ ԵՐԳԸ



Լուսին չըկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ արագ,
Տեսանք որ քաջ Խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք։

Կեանքերը ազգին նուիրած,
Կըտրիճ Խանն առաջ ընկած։
Գնում էին Տաճկաց առնման,
Թըռչում էին ինչպէս կրակ։

Հըրացանները ուսերին,
Դրօշակը պարզել էին։
Գնում էին ուրախ զուարթ,
Աղատութիւն երգում էին։

Մութ անտառից անցնում էին.
Ամէն մէկը տխուր էին.
Նժոյգ ձիանց վրայ նստած,
Մերկ սրերը քաշել էին։

Երբ քաջ Խանը եկաւ Բասեն,
Թնդանօթներ արձակեցին.
Հայ քաջերի մօտիններից
Գնդակները դուրս եկան։

Սեղ կռիւն սկսաւ,
Երկու անցեալ թշնամուց մէջ.
Թուրք զօրքերին դիմադրեցին,
Փառաց պսակ վաստակեցին։

Երբ քաջ Խանը հրահանգ կուտար,
—Սրի՛ք տուէք ինձ քաջ.
Մեր թշնամու խիտ շարքերը,
Կտրեցին ձախին ու աջ։

Երբ քաջ Խանը «ուռա՛յ» գոռաց,
Թշնամիքը մոլորուեցան,

Հազարաւոր տաճիկների
Գլուխները չախչախուեցան։

Ձերմ եռանդով կռուում էին,
Սրտերումը կար շատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր,
Չէին կարող կանգնել տակ։

Կեցցէ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը.
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերիցը կարեց քունը։

Հայաստանի հողի վրայ,
Քաջը թափեց իւր արիւնը,
Միճաղ, յիշէ չը մոռնաս,
Կարիճ Խանի քաջ անունը։



Ահա՛ կ'երթամ սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու
Քաջ ընկերոքս ետ միասին,
Անգութ թուրքերն ջարդելու.
Մի լար, մայր իմ, մ'ողբար, մայր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս հայոց ազատութեան,
Տիւ և գիշեր աղօթէ։

Ահա կ'երթամ, սիրելի քոյր,
Նրպատակս է բարի,
Ձեզ դիմանար, մեզ դերի ենք,
Իբր վեց հարիւր տարի.
Մի լար, քոյր իմ, մ՚ողբար, քոյր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Աղգիս հայոց ազատութեան,
Տիւ եւ գիշեր աղօթէ։

Սեբաստիա երբ կ'երթայի
Երկու օրէն դառնայի,
Երկու օրս ալ կ'ըլլար տարի,
Ես քեզ շատ կարօտնայի.
Մի լար, մայր իմ, լեն։

Եղէի լեռանը վրայ,
Քար մը դարնէի գլխուս,
Իմ գլխուս եկած ձիւները,
Մասեաց գագաթն ալ չըկայ.
Մի լար, մայր իմ, լեն։

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ
Տեսնողին զարմանք կուտայ,
Հայ քաջերու արիւնովը
Կարծես ներկած ճիւղեր կայ։

Սրդեօք այս մեր քաջածները
Պիտ' վերջացնե՞ս, ո՛վ Աստուած,
Գուցէ ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրօշակը պարզուած։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1834—1881

Հայ դրականութեան ու նա մանաւանդ հայ երաժշտութեան ցանցառ այլ զօրեղ գործիչներու թիւին մէջ նշանակելի ուժ մը եղած է Եղիա Մ. Տնտեսեան իբր երաժշտագէտ, տպագրիչ և ուսուցիչ։

Ծնած 1834 Մարտ 29 ին Կ. Պոլիս Օրթագիւղ՝ տեղւոյն ազգ. վարժարանին մէջ կը ստանայ իւր նախնական ուսումը, աշակերտելով միանգամայն տեղւոյն քահանաներէն Տէր Պօղոսի (Գրիգոր վարժապետ) ուրկէ կ'ուսանի նաև հայ երաժշտութեան նախատարրերը։

1848 էն յետոյ իր պատանեկան և երիտասարդական շրջաններն կ'անցնէ աշակերտելով Օրթագիւղի Սրապեան տպարանը ուր կ'ուսանի տպագրութեան արուեստը։ 1861 ին կը հրատարակէ իր առաջին գործը. ծաղկաբաղ կաթողիկեայց թղթերու մեկնութեանց ուրկէ տարիքիմբ յետոյ 1862 ին անձնուէր ընկերութեան կողմէ իբր ուսուցիչ կը ղրկուի Հաճըն. 1864 ին Երուսաղէմ կ'ուղևորի և նոյն տարին կը հրատարակէ բովանդակութիւն նուագաց Հայ. եկեղեցւոյ (Երգոցական ձայնագրութեամբ) ինչ որ յանդուգն ձեռնարկ մըն էր երաժշտական Հայ խաղերու դէմ ընդվզողը։

1867 ին Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչ և տպարանին տնօրէն կը կարգուի և հոն կը հրատարակէ պատմութիւն Ս. գրոց հին եւ նոր կտակարանաց դասագիրքը։

Պոլիս վերադարձին բացի ուսուցչութիւնէ կը զբաղի նաև գրավաճառութեամբ, յետոյ Միհիթարեանի աշակերտելով ձուլարան կը բանայ և վերջապէս 1872 ին կը յաջողի ունենալ իւր սեփական տպարանն որուն արուեստին հմտացած էր երկարաւուն գործակցութեամբ Սրապեան և Երուսաղէմի վանքին տպարաններուն և կը տպագրէ Սրուանձեանցի Մանանայն, Թորոս Աղբարը, Գրոց Բրոցը, Խրիմեանի Հայդոյժը, Հրաբիրակը ևն ևն.

1873 ին կազմուած եկեղեցական երաժշտական յանձնաժողովին ատենապետ կ'ընտրուի և կը պատրաստէ հայկական խաղերով ձայնա-

գրուած Շարական մը որ հետզհետէ կը վաւերացուի նոյն ժողովէն։ 1874 ին կը հրատարակէ իր Ճկարագիր երգոցը որ հայ երաժշտական արուեստին վրայ հմտալից ուսումնասիրութեամբ խառն թեր ու դէմ գրուած տեսութիւններէ կը բաղկանայ։ 1877ին Գուստաւ—Գիւղի և Ղազարեթիոյ եկեղեցիներուն դպրապետ և երաժշտութեան ուսուցիչ կ'ըլլայ եւ իբր կրօնագիտութեան դասատու կը վաւերացուի կրօնական ժողովէն։ Նոյն տարին կը հրատարակէ վարժուրիւն ձայնաւոր մանկաց դասագիրք։։

Իր կեանքին վերջին տարիներն տակաւին իր գործունէութեան արխուր շրջաններն պիտի ըլլային։ 1876ին հաստատուած բանտարկութիւնն իւր տուրը տալու վրայ էր նոյն միջոցին և իր տարին տրութիւնը պիտի փորձէր նաև Տնտեսեանի վրայ։ 1880ին կը հրատարակէ հայ երգերու խնամոտ հաւաքածոյ մը, Նոր Երգարան Հայոցը, գիրք մը որ յետոյ ամբողջ 28 տարիներ կրակի պէս պիտի այրէր շատ մը հայերու սիրան ու կեանքը, քիչ յետոյ կը սկսի հրատարակել Նուագք Հայկականք անունով աղգային (Տեսէք էջ 7) երգերու ձայնագրուած պարբերական թերթերը որուն 14 թիւերը միայն կարող կ'ըլլայ հրատարակել (23 երգեր ընդամենը)։ 1881ի սկիզբը իբր աղգային երգարաններու հրատարակիչ կը բանտարկուի, ու յետոյ բանտի խոնաւ մթնոլորտէն հալիս փոխադրուած նոյնքան խոնաւ բանտի Հիւանդանոցն, կը մեռնի 1881 ապրիլ 23ին իր անձին զոհաբերումովը բանալով հայու սեւ ճակատագրին նոր շրջանը, բանտի, թշուառութեան, չարչարանքի ու մահու...։

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՋԻԿ



Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղալէն
Եկեալ ասա զամբիւղօք ի Հայոց երկրէն,
Յուսամ զի Հայ տիկնայք և պարոնայք Հընդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց.

Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ
Ա՛ռ զամբիւղս յոտար աղջկանէս։

Զ Սրատաս և զԵփրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շրջիմ ասա յերկրս Գանդէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէ՛ք անտերունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ ասա պանդուխտ էին։

Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ են.։

Զամբիւղք իմ են յարմար ասղնագործութեան,
Պահել անդ զմատնոց, ըղձել, զասղամանս.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան
Երբ խաչին և դաւին իմ զինեւ խայտան։

Ա՛ռ զամբիւղ, ա՛ռ զամբիւղ են.։

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի,
Պէտք ասկաւք, ցաւք ասկաւք կան յիմում երկրի.

Այգի մի ունէի, զամբիւղ դարձէի.
Լոկ կաթիւամբ և պտղով երջանիկ էի։
Առ զամբիւղ, առ զամբիւղ, ևն.

Առատ սերկեւիլ, ծիրան և խաղող չիկայ,
Բայց միայն ադայ, բիլա և քիլայ(*)
Ա՛խ, ե՞րբ լոյէ ատիանի եղէց վերջատին
Ճաշակել զպտուղս իմոց պարտիզին։
Առ զամբիւղ, առ զամբիւղ ևն.։

Ահա դուք լաւ տիկնայք, զամբիւղս իմ առէ՛ք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէ՛ք,
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք,
Զերախտիս ձեր առեալ՝ դովեցից բազմօք։
Առ զամբիւղ, առ զամբիւղ ևն.

Մ. Դ. ԹԱՂԻԱԵԵԱՆՑ

ՀՐԱՒԷՐ



Տեսէ՛ք ազաւնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին
Աւետիս կուտայ Հայկեան սերնդին
Թէ եկաւ գարուն Թորգոմայ զարմին։

Արթնցէ՛ք Հայեր, քաջաց զաւակներ
Առէ՛ք մրուխեան տէգ ու նիզակներ,

(*) Պտուղք Հնդկաց։

Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ
Հաղէ՛ք քաջութեան զէն ու զրահներ։

Հինգ հարիւրամեայ մի քուն քնացանք
Զ՝Աստուած ու զերդայր խպտու մոռացանք,
Սիրոյ, միութեան լսիր մերկացանք
Ատելութեան ձեռք խոզալիք դարձանք։

Մոռցանք Հայրենիք, մոռցանք Հայաստան,
Կորուսին մեր փառքն ու Արմենիան,
Մաս մը Ռուսաստան մաս մը Պարսկաստան
Մնացին, Հայեր, թշուառ, անպաշտպան։

Երկին՝ք բարկացաւ, Հայրենիք լացաւ
Մեր Չուրն ու հողին մեզ արիւն դարձաւ,
Խաչեալն Յիսուս մեզի մոռացաւ
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ։

Այսչափ քնանալ մեզի հերիք է
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու զինուորին համար պարտիք է։

Եկէ՛ք միանանք, բանանք դպրոցներ
Մեր մատաղ մանկանց համար վարժոցներ,
Վառե՛նք, բորբոքենք սիրոյ հոցներ,
Մեր սառած արիւն ելլան հալոցներ։

Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր
Լացին հայրենեաց դաշտեր ու սարեր,
Հերիք ալ ձեզի, հերիք է վառեր
Դերի՛ք մեր բաժին արցունք ու սեր։

ԳՈՂԹՆԻ ԿՆԱՐ



Թէ Հայրենեաց պատկադիր,
Գողթնի քնարք լռեր են.
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պատկել։

Մատեաց դպրութն թող գան բազմին,
Երկնից գունտ գունտ հրեշտակներ.
Ստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն հոտոտել։

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ուռդուած է,
Հայոց քաջաց արիւնէն։

Եւ կը ծլին և կը ծնին,
Ան դաշտին մէջ ոչ խոտ վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր,
Պիտի ծաղկի աւրբ հաւատ։

Քանդակագործ քաջ Եղիշէն,
Գրիչ ի ձեռն դայ յԱրտազ.

Զարիէ, ձեւէ, դրէ, դրոշմէ,
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ։

Ո՛հ Վարդանայ անուան արժան,
Մախս կանգնի մահարձան.
Մեռատանները խաչն ի գլխէդ,
Աւետարան տուր հաւատ։

Ծագէ արեւ քոյդ հառագայթ,
Խաղաւոց լեռնէն, մութ խորշէն.
Այն տեղ ինկար քաջ Հմայեակ,
Այն տեղ պառկեր նահատակ։

Լուսին, լուսին, աչօքդ անքուն,
Պահէ հայոց ոսկորներ.
Եւ Մայիսի զուարթ ցօղով
Ցօղէ անոնց շիրիմներ։

Արծուիք, բաղէք Հայաստանի,
Եւ արագիլ ամրան հիւր,
Դուք հակեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն։

Մոխիրներու վրայ նատէք,
Աւերակներ շինէք բուն.
Եւ ծիծեռնակ դայ ու երթայ,
Մինչեւ Հայոց դայ գարուն։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁԵԱՆՑ

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Moderato

Տ. ՋՈՒՏԱՆՑԱՆ

Ա - հա բա - ծակ ու - բա - խու - թեան ի սեր յա - ւերժ

մի - ու - թեան. Ի սեր յա - ւերժ մի ու - թեան. Քիր վա - ք - լուշ

տ - ցիք ճաց - կեան մեկ - տեղ Հրր - ճուին. եւ ցրն - ծան եւ ցրն - ծան:

Կեց - ցե՛ սեր եւ մի - ու - թիւն կը բնկ մի սիրտ

մի ա - րիւն. Կեց - ցե՛ սեր եւ մի ու թիւն

Կը - բնկ մի սիրտ մի ա - րիւն մի ա - րիւն.

Վեր - ցուր աչ - քըդ յեր - կնից կա - մար, Հայ - ի հե - ռուն աստղ մի պայ - ծառ

Եւ դու ո՛ Հայ զայ - թիր փրտ առ. Հա - յոց քաղ - դրն

ալ չէ խա - ւար. Կեց - ցե՛ սեր եւ մի ու - թիւն

Կը - բնկ մի սիրտ մի ա - րիւն. Կեց - ցե՛ սեր եւ մի ու թիւն

Կը - բնկ մի սիրտ մի ար - ի - ւն Կը - բնկ մի սիրտ մի սիրտ մի ա

- բիւն, Կը - բնկ մի սիրտ մի սիրտ մի ա բիւն

Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէրժ միութեան,
Զի վայելուչ՝ որդիք Հայկեան,
Մէկտեղ հրճուին և ցնծան։

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմ.ք մի սիրտ մի արիւն։

Վերցուր աչքդ յերկնից կամար,
Փայլի հեռուն ասող մի պայծառ,
Եւ դու, ո՛ Հայ, զարթիր սիրտ առ,
Հայոց բաղդը ա՛լ չէ խաւար։

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմ.ք մի սիրտ մի արիւն։

Բա՛ւ է այսչափ բաժանում,
Ըլլամ.ք ուրախ եւ խնդում.
Նախանձ, վրէժ ձեզ թողում,
Անդունդ.ք և վիհ.ք անհատնում։

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմ.ք մի սիրտ մի արիւն։

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՚ալ ընենք միութեան.
Լեցուր փափաքդ Հայաստան,
Տես որդիք քո միանան։

Կեցցէ՛ սէր եւ միութիւն
Կրեմ.ք մի սիրտ մի արիւն։

Ինչ և ընեմ.ք ինչ կերպ առնեմ.ք,
Ո՞ չը գիտաց թէ մե.ք Հայ եմ.ք,
Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմ.ք,
Սրի.ք ծիծաղ դիմօ.ք երգեմ.ք։

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմ.ք մի սիրտ մի արիւն։

Որ բռնաւոր ոՐ օրէնքներ,
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր.
Ազգիդ օգուտն ու բարիքներ,
Սիրոյ գահն է յերկինս ի վեր։

Կեցցէ՛ սէր եւ միութիւն,
Կրեմ՛ք մի սիրտ մի արիւն։

Ս. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԻՐՈՒՆ



Մեր հայրենիքի սիրուն
Խմբեր պատռտուած են քաջ,
Հրացանները ուժերին,
Փամփուշտները ճախ ու աջ։

Հնազանդ կարգով շարուած,
Իրենք առիւծի պէս քաջ.
Խմբապետը հրաման տուաւ
Գնալ դէպ յառաջ յառաջ։

Ոսկեթել պայծրդներով,
Լաղի շորեր թանկագին,
Գնում էին դէպի Սասուն՝
Օգնելու Անդրանիկին։

Համիտիյէ զօրքերուն
Հրամարտակ կարդացին,
Թնթանօղներով զօրքերով
Դէպի Սասուն դիմեցին։

Խմբապետը Նէվրուզն է,
Օգնականը՝ շատ քաջեր,
Սղճօն առաջն էր ինկեր
Պատերազմի կ՚ապատէր։

Հայ քաջերը դիր.ք մտան
Թշնամին պաշարեցին,
Սմէն կոչմէ «Կրակ տուէ.ք,
Կոտորեցէ.ք դուռացին։»

Սհա եկաւ ճան Գէտան
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտ զօրքեր անադին։

Խաւարից լոյս ծագեցաւ
Սպասում են մեծ գործեր
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս են նոր նոր յոյսեր։

ԵՐԳ ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅՈՑ



Ի զո՜ւր են ի զո՜ւր, բռնաւոր,
Ընպառնալի՛ք քո ամենայն.
Ո՛չ, քո շղթայք չեն զօրաւոր
Ցընկճել զոգիս մեր Հայկական։

Ընդմարմին, միայն զայս մարմին
Կարես գերել՝ քեզ ի նախատ.
Սակայն ոգի՛ք մեր երկնային՝
Սիրտ Հայկազանց են միշտ ազա՛տ։

Ազա՛տ են, ազատ մեր լեզո՛ւք,
Մաղթել ըզչանթս Արդարութեան
Ի գլուխս ձեր, ո՛վ արիւնարբո՛ւք՝
Որ աւերէ՛ք ըզՀայաստան։

Ի գլուխս անկցին թշնամի՛ք,
Անհետացին մինչ յաւիտեան,
Կեցցե՛ն Արքայ և Հայրենի՛ք,
Կեցցէ՛ անմահ մերս Հայաստան։

Խ. Ե. ՆԱՐ-ՊԷՑ

ԽԱՒԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ



Խաւարել եմ ինչպէս գիշեր ,
Իմ չորս կողմս է փոթորիկ .
Զուռնիմ ես սէր , չուռնիմ ես սէր ,
Ես սիրում եմ իմ հայրենիք :

Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր ,
Որդեկորոյս ծնողներ .
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր ,
Թափում են յորդ արցունքներ :

Ինձ մի սիրիր , ինձ մի սիրիր ,
Ես շատ ու շատ փոխուել եմ .
Առ թաշկինակդ աչերդ սրբիր ,
Ես քեզ սիրել կարող չեմ :

Մնաս բարեաւ իմ աչքի լոյս ,
Սէրդ լինի ինձ խրախոյս ,
Այդ արտասուքը ես պիտի թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ :

Ա՛խ , տուէ՛ք ինձ մի քաջքր քուն ,
Կեանքից հեռու պտտում .
Այն աշխարհը ուր խնդութիւն ,
Ուր սէրն է միշտ անթառամ :

ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ


Andante
Պըզ-տի տը - ղայ չեմ - ր - ր - ր - ր օ - ր - ր - ր - ր

ԳԷՈՐԳ ԶԱՒՈՒՇԻ ԵՐԳԸ



Թուրքը լսաւ անունդ Զաւուշ
Դէմքդ սիրուն, լեզուդ անուշ.

Կեանքիդ մէջ հանդիսաւ չունեցար,
Թշնամեաց դարձուցիր ապուշ.

Սասունն է քո ապաստան.
Վրէժ է քո դատաստան:

Հայոց համար ապարտակեր,
Անդրանիկին ընկեր վարպետ:
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ Սուրբ Կարապետ:

Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան:

Կռուեցիր քանիցս վաշտ,
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ.
Անվախ հերոս թուրքաց դէմը,
Մինչեւ վերջը մնացիր անհաշտ:

Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան:

Անվախ հերոս ես ճշտապէս,
Հայք պիտի յիշեն մշտապէս,
Քաջաց քաջն ես Գէորգ ատրդար
Վարդանի տիպ ես խիստապէս:

Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան:

ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ



Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան Դրոշակ.
Կեցցէ՛ հայրենիք դոչելով,
Բարձրացրին աղաղակ:

Թնդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհքը Հայկական,
Խումբ-խումբ կարդած Հայ զաւակներ
Հանում էին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)
Քաջ Անդրանիկը ղեկավար,
Տալորիկի լեռներում,
Շրջում էին անդադար:

Սարսափեցան քիւրդ ցեղերը
Մինչ՝ պալատը Սուլթանին,
Հրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկներին:

Ահա անգութ քիւրդ ու տաճիկ,
Սարսափելի տեսարան,
Ժամանակ է վրէժ լուծել,
Գոչեց ձայնը Հայկական:

Կրակ տեղաց Հայ քաջերի,
Բեակավայր դիրքերից,
Սլացան քիւրդ խուժանները,
Ահռելի դնդակներից:

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆԻՈՐ ԵՆՔ



Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ ·
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ·
Պարսկաստանի խորքից եկել է նամակ ,
Գնում ենք բարով , կուշանանք տարով ,
Արին, սուր ու հուր պատերազմի դաշտ կ'սպասեն մեզի ։

Դուշմանը մեզ տուեց «Ջան Ֆիդայ» անուն ,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն ·
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն ,
Ուխտել ենք կռուել , այդ սիրով մեռնել ,
Համոզուած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն ։

Սատանը պիտի լինի արեան ծով ,
Ամէն կողմից կռիւ կլսկի շուտով ·
Կատարենք Բաշկալայ , անցնենք հեշտ կերպով ,
Ալից Վարդանը , ձախից Իշխանը ,
Գրաւենք Աղբակ , տարածենք տարտի , փառք Դաշնակցութեան ։

Բաշկալայ գաւառում , այն պատերազմին ,
Աւելի մեծ տարտի տիրեց թշնամուն ·
Քաջ Զէյթունը՝ յաղթեց վատ , չար դաղանին ,
Կեցցէ Զէյթունը , խրոխտ Սասունը ,
Կուսակցութիւնը , բաղդաւոր օրեր , պարծանք Հայերուն ։

Ի ՁԷՆ



Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում։

Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք,
Ելէ՛ք, հայկայ զաւակունք,
Ելէ՛ք, ելէ՛ք, հայ եղբարք
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ։

Ահա՛, եղբարք, հայ եղբայրներ
Առէ՛ք զրահ, սուր, զէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզ հրաւէր կը կարդայ։
Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, եւն։

Ա՜խ, հայրենիք, սուրբ անունդդ
Անչէջ վառի իմ սրտում,
Մեր հայ եղբարց շիրիմները
Իրանց գիրկն են մեզ կանչում։
Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, եւն։

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին,
Ո՛վ սիրում է Ազատութիւն
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն։
Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, եւն։

ԵՐԳ



Երբոր ազգին գահը փլաւ,
Երբոր ազգին թագ փշրեցաւ,
Յայնժամ մոլի վատ կղերներ,
Բարձրացուցին իրենց թագեր։

Ըսին հայոց լոկ հայրենիք,
Է կղերին պաշտած երկինք.
Լաւ է կրօնի չհաւատալ,
Քան թէ անոր դերի ըլլալ։

Հին բռնակալ թագիդ փոխան,
Հայ մարդ, ընտրէ դու քո իշխան.
Թանկ զարդն, պչրանքն դէշ կղերին,
Ա՛ռ, տո՛ւր, կրթէ հայի որդին։

Ազգ մ՚որ չ՚ունի ազատութիւն,
Ան չունի կեանք, չունչ և արիւն.

Զունի կրօն, յոյս հոգեկան,
Անքան նիւթ է ան կոխան։

Երդմամբ վճռէ կամ մահ կամ կեանք,
Փշրէ, կտրէ լուծ և կապանք.
Լաւ է մարդուն բնաւ չ'ապրի,
Քան թէ ապրի այլոց դերի։

Փամիլուշա, զնդակ, ռումբ, ուժանակ,
Առատ լեցուր քո լայն տոպրակ.
Պատերազմի դաշտին մէջ դուն
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն։

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգաց իրաւունքներ,
Որոշած են քաջաց սուրեր։

Որու սուրը կտրուկ լինի,
Որու զնդակն հեռու նետուի,
Իրաւունքն անոր կըլլայ,
Աշխարհն այսպէս կը հաստատայ։

ՏԱՐՕՆՑԻ

ՀԱՅՐԻԿՃԱՆ



Եկել է գարուն, սոխակը սիրուն,
Վարդի թըփի տակ, Հայրիկճան,
Երգէ Հայրենիք։

Ծիծեռնակ, բազէ, թռչունք համօրէն,
Քաշում են միշտ, ա՛խ, Հայրիկճան,
Օտարաց երկրէն։
Կառնկ մեր պանդուխտ իւր բարձր դէրքով,
Փութայ ձայն տալ մեզ, Հայրիկճան,
Հայրենեաց սիրով։
Վասպուրականի երիտասարդներ,
Եւ օրիորդներ, Հայրիկճան,
Սեւեր են հագեր։
Պատանիք, մանկունք, Օրիորդք, կուսանք,
Հայրիկ կանչելով, Հայրիկճան,
Քաշեն հառաչանք։
Մեր սիրան ու հոգին քու հոգւոյդ ղուրպան,
Հրեշտակ Հայ ազգի, Հայրիկճան,
Դարձիր Հայաստան։
Մեր սիրան ու հոգին դու մորմոքեցիր,
Քաղցր ու անուշիկ, Հայրիկճան,
Թողիր գնացիր։
Վասիրի ամիսը, գիտեմ, չես սիրում,
Վարագայ վանքիդ, Հայրիկճան,
Կարօտ ես քաշում։
Հրաժարական քարոզիդ տուիր,
Խեղճուկ արտերնուս, Հայրիկճան,
Կրակ վառեցիր։
Իսկ Երկուշաբթին, որ օրն էր Աւագ,
Ի Սուրբ Յակոբէն, Հայրիկճան,
Դառնացիր արագ։
Ո՛ւր որ ալ լինիս, ո՛ւր որ ալ երթաս,
Քու փայլուն Հանէդ, Հայրիկճան,
Մեզի լոյս կուտաս։
Երբոլ ճանաչէ քու բարձր արժանիք,
Մինչ քու կարօտովդ, Հայրիկճան,
Կ'այրին.ք տոչորին.ք։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1820—1907

Վերջին յիսնամեակի ընթացքում, եւ նրանից էլ առաջ չկայ մի Հայ անհատ որ այնքան խոր հետքեր թողած լինի մեր կեանքի մէջ։ Լէո

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ *ծնած է* 1820 *Ապրիլ* 4*ին Վանայ Այգեստաններեր։ Մանկութեան հասակին մէջ զրկուելով ծնողքէ, դաստիարակուած է իր քաջակաշտ հօրեղբօր՝ Խաչատուրի քով որ Խրիմեանի ինքնածին տաղանդին առաջին նախնական կրթութիւն մը տալոյն կրցաւ մատակարարել, զի տակաւին այն ատեն վարժարան գոյութիւն չունէր Վանայ մէջ։*

Մկրտիչ Խրիմեան՝ հակառակ վարդապետանալու միտումին՝ հնազանդելով մօրը կամքին որ անպատճառ կուզէր իրենց տերունդին յարատեւութիւնը ապահովուած տեսնել, կ'ամուսնանայ Սեբիկեանց Մ. Յովհաննէսի աղջկան հետ, որմէ կ'ունենայ միակ աղջիկ մը։

Երբ դաւառներէն Հայ զինուորներ սկսան առնուիլ, Խրիմեան որ ճիշդ զինուորագրութեան տարիք ունէր, Վանէն խոյս կուտայ ու Պարսկաստան կ'ապաստանի, ուրկէ կ'անցնի Կովկաս եւ Էջմիածնի առդիւրով Կ. Պոլիս կ'երթայ։

Հայ մեծամեծներու երբեմնի կեդրոնին՝ Խասգիւղի մէջ աղջկանց վարժարանին ուսուցչութեան կը կոչուի եւ այս առիթով մօտէն յարաբերութիւններ կը մշակէ ազգին երեւելիներուն հետ եւ շատոնց առնները կը մտնայ իբր դաստիարակ։

Այն ատեն մանաւորապէս Կիլիկիա մեծ ուշադրութեան առարկայ եղած էր եւ մեծ խնամք կը տարուէր այն կողմերու դաստիարակութեանը։ 1852*ին Խրիմեան իբր վարժապետ կամ իբր տեղեկաբեր կը զրկուի այդ կողմերը Պատրիարքարանի յանձնարարութեամբ։ Տարիէ մը կը դառնայ Կ. Պոլիս եւ կ'անցնի իր հայրենիքը Վան, ուր մնաց կը գտնէ իր կինը եւ աղջիկը։ Վշտակոյ կը դառնայ իր հին ուխտին՝ եւ* 1854*ին Սղթամարայ տաճարին մէջ*

Վանայ Առաջնորդ Տ. Գաբրիէլ եպիսկոպոսէն վարդապետ կը ձեռնադրուի։ Խրիմեանի փափաքն էր այդ մեծ վանքին մէջ ծառայել, արդէն նախապատրաստուած էր որ մամուլ և ժառանգաւորաց վարժարան պիտի հաստատէր և լուսաւորէր այդ վանքին մութ ու խաւարին մէջ ընկղմեալ թիւմական հայ ժողովուրդը։

Պոլսոյ մտածող և զգացող հայ անձերը այս խորհուրդը առած էին իրեն, և խոստացեր էին ինչ որ հարկաւոր էր։ Բայց Սղթամարայ միաբանը և Վասպուրականի դործի վրայ եղողները մերժեցին Խրիմեանը և ծիծաղեցան անոր յոյսերուն վրայ։ Խրիմեանի բաժին մնայ Վանայ բեռը ուր իր քարոզութիւններն ալ զերծ չմնացին հալածանքէ վասն զի անոնք նոր էին, աւելի ազգային քան կրօնական, աւելի երկրային քան երկնային։ Խրիմեան հալածական կիյնայ Կ. Պոլիս և Սկիւտար Ս. Խաչի քարոզիչ կը կարգուի (1855)։

Հոն կը մշակէ մտերմական յարաբերութիւններ Օտեանց տան հետ, որուն պետը Պօղոս աղա, իր տունը և սեղանը և քսակը ազգին նուիրած էր։ Այդ տունն էր կայանը անոնց՝ որոնք ազգին համար բան մը կը մտածէին։ Հոն էր որ մշակուեցաւ ազգային թատրոնը, Աշխարհաբարին գրական լեզուի կարգապար տալու գաղափարը, և հոսակ ուրեմն Ազգային Սահմանադրութիւնը։ Այդ կաճառին մէջ՝ գաւառին այդ զաւակը Հայաստանի ցաւերուն ներկայացուցիչը հանդիսացաւ և առաջին անգամ մէջ նետեց «Արմատը կենդանացնել»ու ծրագիրը։ Արմատին՝ բուն Հայաստանցի Հայու համար գործելու եռանդումն էր որ սկսաւ հրատարակել Սկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյ կից իր հաստատած տպարանին մէջ Արծիւ Վասպուրականի ամսաթերթը, զոր 1856ին յաջողեցաւ Խրիմեան՝ Օտեանի օժանդակութեամբ տեղափոխել ի Վարագ և հոն նոյն իսկ Հայաստանի մէջ առաջին անգամ մտցնել լուսոյ գործիներէն մէկը՝ մամուլը։

Խրիմեան՝ անսահման ժողովրդականութիւն ձեռք բերաւ Վանայ մէջ, մանաւանդ այն դասակարգին մէջ որ կը ներկայացնէ լուսաւորեալներու խումբը։

Հոն բացաւ նաև գիշերօթիկ վարժարան մը որուն ծախքերը գոցելու համար 1860ին անձամբ գնաց Էջմիածին և Մատթէոս կաթողիկոսի յանձնարարութիւնով անցաւ Թիֆլիս, ուր ժողովրդական խանդավառ ընդունելութեան մը արժանացան իր նոր ուժով

քարոզները և Կռունկի մէջ իր գրած մէկ յօդուածը։ Սարգիս եպ. Ջալալեան և իր կուսակիցները չկրցան՝ գեղջուկ վարդապետին գտած այս ընդունելութեան հանդուրժել, հետեւաբար կաթողիկոսէն խնդրեցին որ եւս կոչէ և յանձնարարականը ձեռքէն առնէ։

Խրիմեան անվհատ շարունակեց և բաւական նպաստներով դարձաւ Վան, և յաջողեցաւ պայծառացնել վարժարանը, տպարանը և Արծիւ Վասպուրականին։

1862ին Խրիմեան կը կարգուի Մշոյ վիճակին առաջնորդ և Ս. Կարապետի վանահայր, պահելով հանդերձ Վարագայ վանքին վանահայրութիւնը։ Մամուրն ալ Մուշ կը տեղափոխուի և 1863ին «Արծուիկ Տարօնոյ» անուամբ կը սկսի հրատարակուիլ։

Խրիմեան՝ «արտաքին կենդանութեան» համար իր ունեցած հաստատուն դաղափարին առջեւն ալ չակարացաւ և երբ արտորցած Մուշ կը դառնար, առաջին անգամ յանդուգն դաղափարը ունեցաւ Կարնոյ կուսակալին ներկայացնելու տեղեկագիր մը որով կը դանդատէր Մուշի մէջ տեղի ունեցած հարստահարութիւններէն։ Կուսակալը անձամբ քննութեան եկաւ և եօթանասուն նշանաւոր անձեր մեծ մասամբ քիւրտ տարագրեց Ռումելիի կողմերը։

1868ին Գէորգ Դ. Կաթողիկոսէն ձեռնադրուեցաւ Տարօնի եպիսկոպոս և վերատին դարձաւ վանք։

1869 Սեպտ. 4ին կ'ընտրուի Կ. Պոլսոյ Պատրիարք և Հոկտ. 3ին Մուշէ կը մեկնի դէպի Կ. Պոլիս իր ականջին մէջ ունենալով իրեն յուզարկ եկողներու սա ձայնը «Հա՛յրիկ, հա՛յրիկ, մի մոռնար աղքատ Մշեցին և անոր խեղճ մանկտին»։

Սակայն Հայաստանի աւերը Կ. Պոլիս փոխադրեց և ինչ որ Տարօնի մէջ սկսած էր, շարունակել ուզեց Կ. Պոլսոյ պատրիարքական գահուն վրայէն՝ հարստահարութեանց խնդիր յարուցանելով, բարեկարգութեանց պահանջ ներկայացնելով, քիւրտերը դատապարտելու պէտք ներկայացնելով։ Բայց մեծ սկզբունքներու մարդը, փոքրիկ զանցառութիւններու մարդը եղաւ։ Օրէնքին ոգին յարգեց և տաւին դէմ ընթացաւ և ասոր համար հաճելի չեղաւ ոմանց որ զինքը հալածեցին։ Խրիմեան՝ 1873 Հոկտեմբերի մէջ հրաչալի հրովարտակով մը որ իր տեսակին մէջ գլուխ գործոց մը էր, իր պաշտօնը թողուց կամաւ և 1873-1878 շրջանին մէջ ինքզինքն գրական

աշխատութեանց նուիրեց, հետզհետէ հրատարակելով գեղեցիկ հատորներ, մինչ կողմէ գործակցեցաւ իր յաջորդին՝ Վարժապետեանի հետ, դաւառի Հայոց վէրքերը բուժելու համար։

Ռուսական պատերազմը առիթ տուաւ իրեն աւելի մօտէն մինչեւ ի ելլալու այս գործին, որով առիթ ունեցաւ իբր պատուիրակ Հայոց ուղեւորելու Պերլին իբր գիտակ Հայաստանի Հայոց տխուր վիճակին։

1880ին Վան կը դառնայ, իբր առաջնորդ և զեկավար նպաստ բաժնելու գործին։ Իր դիտաւոր վարմունքը դէպի տվատանջ ժողովուրդ, նոյնիսկ դէպի քուրդերը, աւելի ևս բաձրացուցին իր ժողովրդականութիւնը։ Այդ միջոցին էր որ Վանայ մէջ բացաւ երկրագործական դպրոց մը որ քիչ յետոյ փակուեցաւ նիւթական միջոցներու չգոյութեան հետևանքով։

1885ին կառավարութիւնը զինքը հեռացուց Վանէն իբր գործակից Փորթուգալեանի։ 1885-90 Կ. Պոլիս մնաց Գուզկունճուզի քարոզչութեան մէջ և ապա աքսորուեցաւ Երուսաղեմ։

1892 Մայիս 5ին Պատրիարքարանի ժողովին մէջ միաձայնութեամբ Սամեանցն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ և Սեպտ. 14ին հաստատուեցաւ Սկէրբանդը Գ. կայսրէն։

Օսմ. բռնակալ կառավարութիւնը՝ Հայրիկի անտահման ժողովրդականութենէն վախնալով պայման դրած էր Կ. Պոլսէն չանցնելու, ուստի նորընտիր Հայրապետը Եդեսիայի, Թրխեմէի, Վիէննայի և Օտեսայի ճամբով հասաւ Պաթում, ամէն կողմ ցնծութեամբ ու ոգեւորութեամբ ընդունելով և փառաւոր ցոյցերու արժանանալով։ 1893 Սեպտ. 26ին օծուեցաւ Կաթողիկոս, և պաշտօնի ձեռնարկեց այնպիսի պահ մը որ ինչպէս Օսմանեան նոյնպէս նաև Ռուսական կառավարութեան հայեացքները փոխուած էին Հայոց նկատմամբ, որոնք ժամանակ կարգադրութեանց խիստ միջոցներու կ'ենթարկուէին։

1896-1897 թուականներուն փակուեցան Հայոց ծխական դպրոցները և գրաւուեցան յանիրաւի շատ շէնքեր և դրամագլուխներ։ 1896ին պատահեցան Թրքահայոց կոտորածները, և հուսկ ուրեմն 1903ին գրաւուեցան Ռուսահայ եկեղեցական կալուածները։

1905ին տեղի ունեցան Հայ-Թաթարական կոտորածները, և Բայս ամենը զինքը բոլորովին ընկճեցին։ Թրքահայոց վիճակին դարման տանելու համար կարելին ըրաւ, փախստականներու նպաստ հայցնելով և նպաստի միջոցներ հայթայթելով, դիւցազնական քաջութիւն մը ցոյց տուաւ իբր ժողովուրդի զաւակ՝ անոր տէր և պաշտպան կանգնելով և կալուածական դրաւմանց առնն բուռն ընդդիմութիւն ցոյց տալով։

Կռիւը անհաւասար էր և արդիւնքը հրաշալի եղաւ։ Ռուսական յեղափոխութենէն յետոյ Հայոց վերադարձուեցան կալուածները և ինքնապաշտպանութեան եկած ժողովուրդին Խրիմեան՝ իբր Հայոց Հայրիկ շնորհեց ընտրական իրաւունք և աշխատեցաւ կազմել ուսուցչական ժողով դպրոցական ծրագիր մը կազմելու։ Նաև կատարեց իր տանուտէրութեան միջոցին շինութիւններ։

Խրիմեան որքան իբր գաղափարի մարդ և ազգային գործիչ, նոյնքան ալ իբր գրական ինքնուրոյն տաղանդ, Հայուն ոգւոյն մշակ և ներկայացուցիչ՝ նշանաւոր եղած է։

1844ին՝ իր անդրանիկ տպագրեալ գրութիւնը եղած է Հ. Արսէն Բագրատունիին ուղղեալ մէկ գիրը ու տպուած է Բազմավէպին մէջ։

Իր գրական կարողութիւնը սակայն ուշագրաւ եղած է Հրաւիրակ Արարատեան (1850) Հրաւիրակ Երկրին Աւետեաց (1851) գործերով, որոնց յաջորդած է 1853ին անտարապիր Բան առ Մխիթարեան Միաբանութիւն տետրակը։

Արծիւ Վասպուրականի և Արծուիկ Տարօնոյ դադրած էին երբ Մշոյ առաջնորդական խնդրոյ հետևանօք Կ. Պոլիս գտնուած պահուն հրատարակեց Մարգարիտ Արքայութեան Երկնից (1867) անուն մարգարտեայ մատեանը։

Պատերազմութենէն ետքէ յետոյ 1873-1878 շրջանին հրատարակեց Խաչի նառը կամ Ցիսուսի վերջին շաբաթը, Դրախտի ընտանիք, Սիրամ Սամուել, Ժամանակ եւ խորհուրդք իւր, Վանգոյժ և Հայդոյժ անուն գործերը որոնք ցոյց կու տան իր գերազանցապէս օժտուած մտքին կարողութիւնները, ոգին և ըմբռնումը։

Իր հայրապետութեան միջոցին դրեց Պապիկ եւ բռնիկը եւ զանազան քերթուածներ որոնք Արարատի եւ Բազմավէպի մէջ հրատարակուեցան։

Ի Տէր հանգեաւ 1907 Հոկտեմբերի 29ին եւ Նոյեմբեր 6ին փառաւոր եւ անեման յուղարկաւորութեամբ մը իր մարմինը ամփոփուեցաւ Ս. Էջմիածնայ առաջ առաջարին գաւիթը, Ներսէս Ե. Աշտարակեցիի գերեզմանին կից։

Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

ՇԱՐԹՈՒՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ ԿԱՐՆՈՅ



Քընքուշ կեանքը ծանր է թըւում Հայ օրիորդին,
Չէն լ ձերին սիրտ է տալիս հայոց քաջերին։

Երիտասարդք թոթով լեզուով նամակ ցրուել են,
Արարատայ դաշտին վըրայ զինուոր խըմբել են։

Ա՛լ բաւ լացիր, Մայր Հայաստան, երկիրըդ փառաց,
Քու զինուորներդ միշտ կտրիճ են, որչափ ալ քաղցած։

Ա՛ռ ու դգուէ՛ այդ քաջերը քու սրտիդ վըրայ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վըրայ։

Անմիութիւն, ոտնը քանդող հայոց խնդճ ազգին,
Հրաժարեցաւ՝ տեղի տուաւ միութեան ձայնին։

Լըսեց Քիւրան ու սառեցաւ արիւնը խնդճին,
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին։

Եւրոպայի լուրը հասաւ շարժման հայ գեղջկին,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասիրին։

Ցընծա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ուրթը տարուան սուգ ու թախիծ քեզնից վերացան։

Ուսումն ու լոյս-ազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ռազմի պիտոյան անվեհեր։

Ուրախացաւ Մայր Հայաստան, եղաւ կանդնեցաւ,
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։

ՀԱՄԱՀԱՅԱՆԵՐՔ

ՍԱՐԳԻՍ ՋԱՆ ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

(Ամառեալ ի Սիպերիա)



Երբ ալեկոծ ծովուն վրայ
Իմ մակոյկս խորտակուի,
Ես փրփրադէզ ալեայց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կըտրեր։

Բոլոր ուժովս եւ համարձակ
Բազուկներըս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափունք կը թռչիմ,

Անհաւասար այս կռուին մէջ
Թէ ոյժերըս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ զիս մղեն։

Այն ժամանակ դէթ ափոփանք
Ես գտնում եմ նրան մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման
Կռիւ տալով մինչեւ վերջ։

Ես Կուլունեան Սարգիս անուն
Սքարման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Ձեռքերս չղթայ, ոտքերս չղթայ
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքի սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Գերեզմանիս քարին վրայ
Սէրըդ սիրով դու երգիր,
Եւ փոխանակ իմ երեսին
Շիրմիս քարին համբուրիր։

Մընաք բարեաւ, սուր, հրացան,
Մընաք բարեաւ, ընկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի չղթաներ։

Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսանին,
Իմ հայրենեաց խե՛ղճ զաւակունք,
Այս վարդերով զբօսանին։

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ



Աշնի՛ւ ընկեր, մեռանում եմ
Բայց հանդիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անդին ընկեր,
Զրգնահատած ոչ ոքից.
Բայց հաւատում անձնանուէր,
Աղգիս միշտ կը հաշուիմ։

Աշնի՛ւ ընկեր, չը մոռանաս.
Անդաւաճան, ջերմ սիրով
Եւ սիրել եմ իմ Հայրենիք,—
Գընա՛ եւ դուն նոյն շաւղով,

Խեղճութիւնը Հայոց ազգի՝
Կարեկցիր ի մտքի՛ր,
Ոակէ զրքոյին Եվ-շի-ի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր։

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խընկելի ֆաջերով։

Հայրենի՛ք, — սեղան սրբութեան—
Ես՝ Ատուծոյ առաջեւ
Շատ կ՚աղաչեմ, շատ կ՚արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ։

Իմ մտերիմ, մահը մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Որովհետեւ խիղճս արդար է,
Ճըշմարտութեան ջատագով։—

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ՕՐՕՐ



Սրի՛, իմ սոխակ, թող պարտէզ մերին.
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ մի դալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։

Ե՛կ, աբեղաձաղ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ՛ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու ձագուկ մի՛ դալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուվուլով տըղիս բի՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ մի՛ դալ,
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ։

Կաչաղակ ճարպիկ, դող, արծաթաթէր,
Շահի զըրուցով որդուս քունը բեր.
Բայց նալիս է, կաչաղակ մի՛ դալ
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ։

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ՚ուզէ...
Բազէն որ եկաւ, որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ։

1881 ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ

ԱՍԱՍՈՒԵԼ



Սասուն դաւառ, հին Հայաստան,
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդք են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն։

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իր քաջերով,
Որք թ'և ուտեն կլկել, կորեկ,
Խաղան ընդ սուր դիշեր ցորեկ։

Սասուն դաւառ, անտառներով,
Պարապատառ բարձր լեռներով,
Դիմադրեց միշտ թուրք զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն։

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ա'լ սրբացաւ իւր եղեռէջ,
Քարոտ, լեռնոտ ու խորտուբորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ։

Սասուն երկիր յոյժ վարելի,
Լեռներ, դաշտեր ծաղկօք են լի,
Թէև թահսին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բաղձան սեւ հողերուն։

Սասուն կորել ետ հրամանն,
Խալիֆատիպ Համիտ Սուլթան,
Կանայք, մանկունք և արք ինկան,
Իրր քաւչարար զոհ Հայկական։

Ցուրտ դիակաց բարդեալ դէզ դէզ,
Եւրոպացիք եկան ի տես,
Մարտիրոսաց կարգն է Սասուն,
Արժանացաւ սրբոց դասուն։

Սրի Գրիգոն, սուրբ մարտիրոս,
Ի ձեռն Թրքաց ինկաւ իբր որս,
Գերի եղաւ անգութ տաճկին,
Քաջ նահատակն Հայոց ազգին։

Քաջ Գրիգորն հարան էր Շաքէն,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձգեց զինք լեռնէն վար,
Նահատակուիլ ազգին համար։

Սանոյ ընիկք բոլոր հայ են,
Ցէրիզն եղաւ նոցա կայէն,
Սանոյ մէկ մաս կ'ըսուի Կէլի,
Արիւն թափեց զերդ Աբէլի։

Սանոյ հարսեր զերի գացին,
Մանկունք Քրդաց ձեռք մնացին,
Սրոյ ճարակ եղաւ Սասուն,
Գիւղեր արտեր, այգիք հասուն։

Թէև ինկաւ անզէն, անոք,
Առ Սուլթան չեմ բնաւ բողոք,
Գետի նման հոսող արիւն,
Գետնէն բողոք եւ Աստուծոյն։

Թէև ինկար, ո՛վ վեհ Սասուն,
Բայց դաս տուիր զերեալ Հայուն,
Թէ սուր ընդ սուր, բուռն ընդ բուռն,
Բախտակ ծագի արեւ մեր տուն։

ՄԻՆԱՍՅԵՐԱՁ

ԵՍԻՄԱՆՁ



Երբ կը տեսնեմ աչերուդ փայլ,
Երբ կը լսեմ լեզուիդ դայլայլ,
Կ'ուզեմ աշխարհ ըլլայ խուլ, կոյր,
Որ ես միայն քեզ լըզուիմ, քոյր։

Երբ կը տեսնեմ ծոցիդ երեր
Երբ կը լսեմ հոգւոյդ երգեր
Կ'ուզեմ դառնալ մարմիկ անյաղթ
Եւ ի բաց վանել պատիպան հրեշտակդ։

Երբ կը տեսնեմ թիրերդ ի վեր,
Երբ կը լսեմ իղձերդ առ տէր,
Կ'ուզեմ յարձան փոխուիս քոյր իմ.
Եւ Աստուծոյ կը նախանձիմ։

1870 ՄԻՆԱՍ ՁԵՐԱՋ

ՈՂԲԵՐԳ

Andante Ա. ՄԱՐԼՈՅԱՆ op. 14



Դըժնեայց գիշերն անցաւ ու լոյս արեւուն
Ծագեց կարմիր Հայաստանի սարերուն...
Դարձեալ մինակ զուրկ սիրելեաց գրկերէն,
Հեծող բուեր միայն ինծի ընկեր են։

Ո՛ դո՛ւ, անդուրթ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր։

Զեփիւռներէն երջանիկ մի խնդրեմ լուր...
Այլ անոնք ալ սահին քովէս տխուր՝ լուռ,
Ծաղկունք թոռմեր և լուեր է ալ սոխակ,
Մա՜հ կը հոսի մա՜հ... Հայաստան աւերակ։

Ո՛ դո՛ւ, անդուրթ Սեւ Հողեր,
Սիրելիքս ծո՞ցդ ես թաղեր։

Երկի՛նք, գթա՛ յիս, տար զիս ի ծոց սիրելեաց
Եւ կամ ցցո՛ւր իրենց դամբանն ագաղդեաց,
Եւ թող հոն՝ հոն՝ ցամքին արցունքս ու արիւն,
Ո՜հ, հոն վերջ տամ կենացս սեւ օրերուն։

Ցցո՛ւր, անդուրթ Սեւ Հողեր,
Իմ սիրելեաց դամբաններ։

(ՍԵՒ ՀՈՂԵՐ) **Պետրոս Դուրեան**